

ԿԻՆԵՄԱՆ ՕՐԵՐ

Բ.

ԱՆՍՐՉԱՐԱ

Բարձրագագաթ լեռան վրրայ,
Իր մենութեան մէջ անծայր,
Անարգաբան ես տեսայ,
Ինչպէս արքայ վեհափառ:

Իր խորհուրդներն հընօրեայ
Եւ պատմութիւնն յաղթական
Եղան խօսքիս իմ վրկայ,
Քերթուածներուս սիրտ եղան:

Տեսիլքի պէս բարձրացան
Լեռ ու պարիսպ միասին,
Ինչպէս ամպեր ոսկեման,
Յետ յորդահոս անձրեւին:

Եւ յիշեցի հին օրեր,
Անարգաբան երբ ունէր
Առիւծադէմ դըրօշներ,
Նիզակաւոր պահակներ:

Երբ շուրջառով կ'օրհնէին
Պարիսպներն իր խաչակիր,
Ընկրկելու թշնամին
Երիւարով փրփրալիր:

Կարծես դըպայ երկիւղած
Արքաներու մականին.
Պարիսպին տակ խոնարհած,
Սիրտըս տըւի անունին:

Ո՛րքան փառքեր թողուց նա
Անջնջելի արիւնով,
Եւ Կիլիկիան՝ իր վրրայ
Նայեցաւ միշտ հաւատքով:

Պահակն եղաւ դեղջուկին,
Պատին եղաւ կոյսերուն,
Եւ երգասէր արտոյտին
Ծերպեր տըւաւ՝ քաղցըր բոյն:

Իր փողերուն արիւրով
Ասողերն երկիր կ'իջնէին.
Կ'անցնէր ճամբորդն ապահով,
Թեւ թեւի հետ իր հարսին:

Ո՛րքան անուն քաջութեան
Քանդակեցին արիւնով.
Աղատութիւնն էր խորան,
Մարտիկը զոհ՝ հաւատքով:

Այնտեղ սիրեց տաւառիլ
Հայ դըրօշն իր վեհութեամբ,
Գրխուն աստղերը թառիլ,
Զերդ քաջութիւնն ասըտտամբ:

Երբ թշնամին կ'արշաւէր
Անապատի փոշիով.
Անարգաբան կը փոխուէր,
Նիզակներու բոցուտ ծով:

Եւ կոյսն՝ ընկեր մարտիկին,
Եւ խաչը՝ փայլ նիզակին.
Մականին տակ Լեւոնին
Կը խոնարհէր թշնամին:

Հի՛ն անուններ, հի՛ն դըրօշներ,
Ելէ՛ք անցեալ տարերէն.
Անարգաբան անհամբեր
Պիտի գրկէ ձեզ նորէն:

Թէպէտ աւեր մենաւոր,
Թէպէտ առանց շեփորի.
Բայց զերդ մարտիկ վիրաւոր
Ինձ համար է սրաշտելի:

Թրեփորքի, 8 Մարտ 1987

ԼԱՄԱՐՈՆ

Տեսայ լեռներ, տեսայ երկիրնք անձեղուն,
Եւ հինաւորաց բերդ տեսայ.
Պատած էր հոն մեղի անհաս լըռութիւնն
Հողին մարդուն բացակայ:

Արծիւներու խօս երամներ կ'անցնէին,
Ժայռերէ ժայռ քախելով.
Հին օրերու յիշատակներ կ'ուղէին
Իշխաններ հայ անունով:

Կը բացուէին հոն ծաղիկներ միայնակ.
Զըկար քամբիչ համբուրող.
Զըկար փառքով իշխանական դըրօշակ,
Երբեմն ինչպէս լուսաշող:

Ժայռը ժայռին թիկունք տըւած զարերով,
Կը սպասէր մեր Հեթումին.
Կը սպասէր որ իր ձին հասնէր խրխիւնջով,
Եւ կայծն ելլէր սմբակին:

Բարձրութեան մէջ ի'նչ ահաւոր լըռութիւն.
Յիշատակներ անանուն.
Կամարի դէմ կամար կանգնած քաջաբար
Ձեն հանդուրժեր գերութիւն:

Կ'ուղեն Օշինն, Հեթում կ'ուղեն ու Ներսէս,
Խաչը կ'ուղեն իշխանի,
Որ գան անցնին դըրօշակներ ջահի պէս
Փոխան վայրադ հարաւի:

Թրեփորքի, 12 Դեկտ. 1987

ՎԱՀԱՆ ԲԵՐԴ

Ես ո՞ւր փնտռեմ պողպատ բառեր,
Ժայռերուն մէջ քանդակելու
Դիւցազնութիւն եւ անուններ,
Ա'յնքան նըման աստուածներու:

Բերդ մը փոքրիկ, ուր արծիւին
Լայն թեւերն իսկ չեն տարածուիր,
Եւ այնքան քարձր՝ մօտ երկիրքին
Փոթորիկներն իսկ չեն հասնիր:

Կարծես կանգնած անհունին տէմ
Ժամանակներն՝ իր շուրջ ըստուեր,
Հրաւէր կու տայ քախտին դժխեմ,
Հայեացքներովն իր անթիւհեր:

Ասպետի պէս փաչը կուրծքին,
Սուրն երկարեց մինչեւ հեռուն.
Ուր կը հեծէր թշուառութիւնն
Ու գերի էր ազատութիւնն:

Դրօշակներն իր, զերդ ծիրանի,
Ամպերուն մէջ կը ծփծփան.
Ո'չ մէկ բազուկ կը յանդգնի
Ջնջել օրերն հերոսական:

Դեռ կը հնչեն խըրոխտ քայլերն
Աստուածակերտ թորոսներու,
Որոնց անունն արեգակներ
Կը համբուրեն ամէն առտու:

Իր վէմն է պինդ, բիւրեղ մարմար,
Յասերթութեան իբրեւ արձան.
Կապոյտն է միշտ փառքի տաճար՝
Ում կը մեռնի եղբօր համար:

Եթէ պատեց միայնութիւնն
Իր պարիսպներն հազարամեայ,
Բայց քարերէն վեր պատմութիւնն
Ջահ մ'է՝ որուն սահման չըկայ:

Ո՞ւր երազեմ բերդ մը չըբեղ,
Ուր դէնք ըլլայ իր քաջութիւնն,
Արարատի գունեան աղեղ,
Եւ ձիթենին՝ խաղաղութիւն:

Որքան հողիս կը սիրահարի
Ուխտի երթալ դէպի Վահկա.
Կանչել անունը Թորոսի,
Որ չկրնամքին մեղի տառնայ:

Եւ քրմաբար արեղակէն
Առնել ճաճանչ մը մետաքսեայ,
Իբրեւ դրօշակ մը հըրեղէն,
Երբ ձիաւոր Թորոսը դայ:

Թրեփորքի, 6 Փետր. 1987

ԼԵՒՈՆԻ ԲԵՐԴ

Երկինքէն կախ, անըրջանքի պէս աղուոր,
Ասպետներու թոյնը շինուած ժայռերով,
Դեռ կը նայի մինչեւ ծովերն հեռաւոր
Լեւոնի բերդն՝ ինչպէս ինքն էր փառաւոր:

Եւ քար քարի ալիքի պէս թեւ տըւած
Կամ գերդ մարտի հելլոզ հաղար հսկաներ
Մարտկոցներ են, ուր արիւնն է կարծես թաց
Դիպցաղներու՝ որոնց անունն Հայկազ էր:

Դե՛ռ կը շրջի յսկի ըստուերն արքայի,
Դե՛ռ պահած է քերդը վըրէժ շանթահար.
Եւ պատմութիւնն անուն ու փառք կենդանի
Լոյս մատներով կը քանդակէ ժայռէ ժայռ:

Բոյնն է դարձեալ Վահագներուն վրէժխնդիր,
Որ հողածին մահկանացուն չի ճանչնար,
Իր դազաթին ծիածաններ եօթնածիր
Շրջան կ'ընեն, որոնք չունին արեւմար:

Այնտեղ ամպի տեղ մեր հաւատքն է գազաթ.
Այնտեղ շաչող փոթորիկներն են զինուոր.
Թէ իր կուրծքին զարնեն հազար սուր երկաթ,
Պիտի լըսեն փառքի գանգիւն հեռաւոր:

Չեմ գիտեր թէ ե՞րբ պիտի դայ հին դարուն,
Շուրջը ծաղիկ եւ ցնծութիւն արփռելու.
Ե՞րբ պիտի դայ մեղրամոմէ կուսութիւնն
Իր պարերով քաջերու գովքն հիւսելու:

Ոտքերուն տակ աշխարհս եթէ կը սողայ,
Թէ լռութիւնն անմեղ արիւն կը տիրէ,
Ո՞վ Աստուած իմ, ձեռքըդ բարի թող ըլլայ.
Լեւոնի բերդն Հայուն համար միշտ պահէ՛:

Գ.

ԼԵՒՈՆ ՄԵԾԱԳՈՐԾ

Արքայ որ միշտ արծիւի պէս ծանրաթեւ
Կը սաւառնիս երկինքին մէջ սրատմութեան.
Դարերն երբեք չըցանցին փոշի տեւ
Թաղիդ՝ վըրան եւ հետքերուդ մեծութեան:

Ու տակաւին կ'անցնիս ամբողջ Կիրիկիան,
Ինչպէս արփին որ չի ճանչնար ժամանակ.
Հազարաւոր նետ ու աղեղ կը շողան,
Կը փայլակէ պատերազմի դէմ նիզակ:

Ասպետ մ'էիր որուն թոցն էր երկվար,
Եւ Կիրիկիան ուխտի խորան՝ թեւիդ տակ.
Հոն Եւրոպան ընծաներովը կու գար,
Ծովն էր ըմբոստ հըրամանիդ հըպատակ:

Առիւծադէմ դըրօշըդ երբ կը ծլփար,
Կը կանդնէին շուրջըդ հազար դիպցաղներ.
Եւ Դուն, Արքայ, աստուածներուն հաւատար,
Կ'երկարէիր մականդ՝ սիրոյ հըրաւէր:

Ո՛հ, Դուռն երբե՛ք պարտութիւններ չըճանչցար,
Առիւծն երբեք թաթն արիւնոտ չըլիզեց.
Մի՛շտ յաղթական եւ մի՛շտ խաչին զօրավար,
Փառք կերտեցիր եւ Կիրիկիան՝ սիրտըդ մեծ:

Բայց մինչեւ ե՞րբ վերադարձիդ ըսպասենք,
Ե՞րբ դարպասիդ բացուին գոռերն ոսկեղէն,
Եւ շանթն ընդայ Արդարութեան ձեռքին ղէնք,
Եւ անունիդ՝ մեր Հայութիւնն արաւէն:

ԼՈՅՍԻ ԱՐՓԱՆ

Այն ժամանակ երկիր մը կար,
Ծովին սիւմաց ծոցերը բաց.
Թանկագին էր, ինչպէս գոհար,
Ինչպէս աչքեր շաղոտ ու թաց:

Վեհութիւնն էր իր գլխուն թաղ,
Հարըստութիւնը՝ ծիրանի.
Արքայ մ'ունէր լուսապըտակ
Երիտասարդ եւ գեղանի:

Երիտասարդ՝ իր հաւատքով,
Եւ իմաստուն՝ ինչպէս Սոկրատ,
Ասպետական՝ իր մականով,
Բերդն էր Հայոց իր անունով:

Այնքան ազնիւ սիրտ ունէր նա,
Որ կը թովէր ողջ Կիրիկիան.
Գիշեր ատենն էր լուսընկայ,
Արուսեակ էր առաւօտեան:

Ուր ձեռքն հըպէր՝ լոյս կը շողար.
Վանքեր կերտեց՝ մտքի տաճար,
Եւ իր հոգին կանթեղ ըրաւ,
Խրճիթներու օրուն համար:

Որքան առատ ոսկի ցանեց
Այնքան եղան գիր ու մատեան.
Արքայական իր սիրտը մեծ
Տենչանքներուն չէր բաւական:

Ու գէնքերու շաչիւնին քով,
Պատերազմի կըրակին տակ,
Որբը գըտաւ սիրտ ու գորով,
Երջանկութիւնն գըտաւ պահակ:

ԼԵՒՈՆ ԵՐԿՐՈՐԴ մեր պատմութեան
Յաւերժական գեղեցկութիւն.
Սէր էր կողքին չքնաղ Աննան,
Եւ երկու սիրտ՝ մէկ քարութիւն:

Վեհտիկ, 16 Դեկտ. 1987

ԱՍՊԵՏ ԼԻՊԱՐԻՏ

Տըւէք ինձ ճերմակ թեւեր արծիւի.
Պողպատէ թեւեր, հըզօր թռիչքով.
Լայնափեղկ քանամ պատմութեան ուղի,
Երկնի մէջ արեւ, ոտքերուս տակ ծով:

Ես կ'ուզեմ առնել փոթորիկներէն
Փայտաղող շանթ, դիւցաղնի անուն,
Հոն՝ ուր հովիտներ գեռ կ'արձագանգեն
Հըպարտ Սիսին դէմ կանչը մարտերուն:

Դիւցաղ մը կայ հոն՝ Լիպարիտ անուն,
Հայրենի ասպետ, Վարդանի պըսակ.
Որուն գեռ սուրէն կը կաթի արիւն,
Եւ փառքին դիմաց չըկայ ժամանակ:

Մահկանացու չէ քայլերով անյայտ,
Ո՛չ կայծ մը մոլոր ամպերուն մէջ մութ.
Արեւի սրտէն ինկած ճառագայթ,
Բռնած է Սիսի անկիւնքն յորձանուտ:

Անցայ փր սուրին կամարին տակէն,
Լըսեցի կանչեր, փողեր վաղեմի.
Ժողովուրդ մը կար անցեալ օրերէն,
Մասիսէն Տաւրոս պահակ հաւատքի:

Ու գետ մը կ'անցնէր Սիսի դիմացէն,
Երախը լեցուն աղմուտ փրփուրով.
Այդտեղ Լիպարիտ անցաւ կամուրջէն,
Երախը ձիուն կարմիր փրփուրով:

Անցաւ ձեռքին մէջ ճուղանն օձաձեւ,
Բաղուկին վաճան, սաղաւարտն արծիւ.
Այնպէս ահաւոր, ա՛յնպէս սըրաթեւ,
Կարծես թէ ըլլար հըրեղէն անիւ:

Տափերն որոտուն, բարձրագոյն փողեր,
Պարիսպէ պարիսպ կ'անցնէին թափով.
Արքան վատազգի գինի կը խըմէր
Եւ կը համբուրէր գրկին մէջ կոյսեր:

— Պահէ դու կամուրջն, ո՛վ Տէր իմ Արքայ, —
Սըլաքի պէս կանչ մ'արքունիք հասաւ.
Ինչո՞ւ գինեկից բաժակն այդ ոսկեայ,
Ինչո՞ւ թունաւոր մոլեխինդ չեղաւ:

Դուրսն աղմուկն էր խուլ եւ յոյսն էր զինուած,
Կին մը արցունքոտ գրկին մէջ մանկիկ,
Վարսերը դէմքին վարագոյր քաշած,
Սեւ բախտն իր կ'ողբար, մանուկն իր ծաղիկ:

Սիսն էր պաշարուած, հազար հազարով,
Անդին սեւ բանակ, ասդին մէկ զինուոր.
Միան էր արեկոծ, աղմըկալից ծով,
Գինի կը խըմէր Կոստանդ թագաւոր:

Եւ յանկարծ մըթին ամպերու մէջէն
Կարծես շանթ եղաւ ասպետն ամեհի.
Միշտ այսպէս կ'ըլլար շատ հին օրերէն,
Երբոր աստուածներ կ'ելլէին մարտի:

Գետը կը բաժնէր երկու ափունքներ,
Անդին աղաղակ, ասդին յոյսի դող.
Թագաւորն անհոգ գինի կը խըմէր,
Համբոյրներուն մէջ կոյսերուն շողջող:

Չափեց արեգակն երկինքը բոլոր,
Եւ գետն արիւնոտ յորձանքով կ'երթար.
Ո՛հ, քանի՛ մայրեր, հարսեր սըղաւոր,
Պիտ՝ հիւսէին ողբ Կիլիկիոյ համար:

Երբոր արեգակն անցաւ ծովէ ծով,
Ասպետն խալ ասրասափ ըզգաց իր սուրէն,
Ու մարտընչելով ու մարտընչելով
Հասաւ կամուրջին՝ յոգնած էր արդէն:

Աւա՛ղ, կամուրջն այդ թշնամին բռնած,
Կը բզլար ամրան գոռեխի նըման.
Նայեցաւ ասպետն ու Սիսն էր դիմացն,
Անդամ մը միայն լացաւ այդ հական:

Թաղեցին առիւծն իր անունին տակ
Եւ սուգերու մէջ թաղեցին իր կիւնն.
— Ո՛վ քաջ Լիպարիտ, Վարդանի դաւակ, —
Ծաղիկ ծաղկի հետ աչխարհով լացին:

Վեմետիկ, 25 փետր. 1969

Դ.

ԽՈՐՀՈՒՐԴ ԼՈՒՍԱԽՈՐ

Հեզ էր, կ'ըսեն, — անունը չող Կ արդէն,
Ժըպիտի պէս որ ամէն տեղ կը սիրուի.
Մեզ հետ է միշտ, հեռանալով դարերէն,
Իր քայլերուն ձայնը դարձեալ կը լըսուի:

Ամէն մէկ հայ դստն կը տեսնէ ու կը դգայ.
Իր սրտին մէջ երգիքէն դերդ լոյս իջած,
Երգի պէս է որ հեշտօրէն ւեր կու գայ,
Աղօթք կ'ըլլայ, կարծես մոմի ձեւ առած:

Սերովբէներ անշուշտ առին Յիսուսի,
Շրթունքներէն անմեկնելի իր անունն.
Երկինք՝ ՆԵՐՍԷՍ, Հայը կոչեց ՇՆՈՐՀԱԼԻ,
Եւ ինքն եղաւ մեր ժամերու սրբովթիւն:

Տենչն եղաւ երգ, զեղուն՝ քոցուտ Սէրն եղաւ,
Եւ ճմլեցաւ հողին ինչպէս կարմիր նուռ,
Երբ երկնաթիւն Աւետարանը տեսաւ,
Պայտի նըման՝ տառերն երկաթ հընարոյր:

Ի՞նչ երազներ եւ ի՞նչ տեսիլ հոգեւոր
Երկինք եղան, աներեկոյ հորիզոն,
Աչքերը՝ ծով, բիւրեղեայ աիրտը՝ սափոր,
Երբոր Աստուած նշխարի մէջ իջաւ հոն:

Շընորհքն եղաւ ճերմակ սըփռոց խորանի,
Սուրբի հողին վըրան թռչող աղանի.
Աղօթեց նա տառապանքով զղջումի,
Հայոց համար, մեր վանքերուն, աշխարհի:

Մեր յոյսն հիմա իր աղօթքով կը բացուի,
Մեր արտերուն կ'ընայ ցորենն հասկ ոսկի.
Ի՞նչ ցնծութիւն եւ ի՞նչ քայրերդ հաւատքի,
Որ երգն է մեր, Նարեկացին տասնադի:

Ուրիշ երգ է մեր ԱՌԱՒՕՏԸ ԼՈՅՍԻ,
Ե՛ւ ապագայ, ե՛ւ զօրութիւն անցեալի.
Մեր արեգակն հայ Սուրբերէն կը ծագի,
Եւ Յոյս կ'ընայ՝ որ չի փոխուիր խաւարի:

Երբոր ննջենք, հայրենի հողն անկողին,
Տաք է մեր կուշտն ու մեր թիկունքն հաստատուն.
Ա՛յսպէս ուղեց իր աղօթքով Շնորհալին,
Պանդուխտներուն եւ հայրենի հիւղերուն:

ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ

Ա. —

Զիս տանջեցին, սիրտըս խաչէն կախելով.
Ո՛րքան երկար է ճամբան.
Ամէնուրեք ես կը տեսնեմ իրար քով
Կեանքը մահէն անբաժան:

Խաչեցին զիս մեղքն էր քեւեռ սալորասուր,
Գըթացէ՛ք, ո՛վ աշխարհներ.
Կողըս եղաւ անմեղութեանը աղբիւր,
Խոց մը քացին կարեւլէր:

Եկէ՛ք ինծի՝ եղբոր նըման ախտակից.
Մահը մերն է ամէնուր.
Նոյն ծընունդով եղանք իրար նենգ դրկից,
Տըսէ՛ք ինծի՝ քիչ մը լոյս:

Ի՞նչպէս պատմեմ սրտիս թաքուն խորհուրդներ,
Անունն ի՞նչպէս մեղքին տամ.
Շատ են անոնք, ինչպէս ծովու աւազներ,
Որ համբելու կը տոհամ:

Ի՞նչ տըխուր է փափուկ լոյսէն հեռանալ,
Մուլթը քունել պատէ պատ,
Սրտին վըրայ սեւաթոյր վէրք մը բանալ
Փոխան սիրոյ շողակաթ:

Ո՛վ Յանկութիւն, աչքեր ունիս գեղեցիկ,
Բայց անթարչամ ծաղիկ չես.
Մի՛ վտոցեր գլիս նետի նըման սըլացիկ,
Նայուածքներով աղեկէզ:

Բ. —

Զղջումի երգն ես կը հիւսեմ թել առ թել
Գիշերուան սեւ մազերով.
Սէրն ալ յաճախ պէտք է երգել արցունքով,
Աչք աչքի մէջ նայելով:

Ո՛վ Աստուած իմ, Դուն սորվեցո՛ւր ինձ ողբալ
Ինչ որ մեղք է անանուն.
Պէտք է այգուն ախտն անձրեւի պէս լըլալ,
Յետոյ պարզել արեւուն:

Ի՞նչ օգուտ՝ ես ծաղիկ ժողովեմ զերդ մեղու,
Խորիսիս չաղուեմ տենչերու,
Երբ կուրծքիս տակ խոր ուռ մը կայ սլէշտերու,
Որ դէպի մահ կը տանի:

Ծունկի եկած ժամադրքի էջին տակ,
Պաղատանքներս կը կրկնեմ.
Տէ՛ր իմ, աչքերս քա՛ց զերդ երկու արեգակ,
Խաչելութեան թելին տակ:

Ես կը սոսկամ որոգայթէն որսողին,
Պարաւանդուած ախտերով.
Ո՛հ, ի՛նչ դառն է ի՛նչալ մեղքի մէջ կրկին,
Երբ կնքեցին մեռնով:

Բայց քաղցր է միշտ՝ Շնորհալիին հետ ողբալ,
Կանչել աշխարհն աղօթքի.
Քաւել յանցանքն ու յոյսի պէս սրբանալ,
Երկնքին տակ հայրենի:

Գ.—

Երեք անգամ խաչ հանեցի երեսիս,
Վանքի մը քով ծնրադիր.
Արցունքներու խառնեցի հող սըղակիր,
Խոր է գրջումը սրտիս:

Քանի հազար հայու շրթներ կրկնեցին,
Լացէ՛ք աշխարհ ամենայն.
Սուրբ Հայր մեկաւ մեզ հետ վալու միասին
Թափուր պատրանքն աշխարհին:

Թողուցէք զիս այս երգին հետ աշխարող,
Բառերն ըլլան քուրձ խայթող.
Տառերն ըլլան փուչերու պէս խոցոտող,
Ըլլա՛մ աիրոյ նահատակ:

Եւ չմընամ մութ օրերուն շղթայուած,
Լացն ալ սրտիս հեշտ ըլլայ.
Երթամ նետովիմ աւաղանն ես Սելովմայ,
Հըրաչքներու սահմանուած:

Երբ տարիներն ուսերս ճնշեն մինչ հողին,
Ափիս դըրէ՛ք այս մատենն.
Ես գրջումով ես կը դառնամ մանկութեան,
Հազար կարօտ իմ՝ երկրին:

ՓՈՂ ՏԱՐՍՈՆԻ

Երբ կը հնչեմ քու անունդ,
Հոգիիս մէջ կը կաթին
Լոյսի շիթեր քաղցրագին,
Հաղորդութեան զերդ սընունդ:

Ինչպէս ըստուերն Յիսուսի
Աչքի շոյս էր կոյրերու,
Քու անցքդ ալ ինձ կը թըւի
Ծաղկազարդի Կիրակի:

Ու կը տեսնեմ տակաւին
Երկինք հասնող բազուկներդ,
Հայ հաւատքին ամուր բերդ,
Շողին հետ շող արեւին:

Հըրաչքի պէս քու հողիդ
Մեր հողին մէջ սերմանեց
Սիրոյ ծաղիկ, հասկեր մեծ,
Երջանկութեան նոր դադանիք:

Աղօթքներովդ խոնարհ
Բացիր փրկի սուրբ ճամբան.
Մոռորածն էր քեզ համար
Սիրելի հիւր ու եղբայր:

Երբ դաշտէ դաշտ կ'անցնէիր,
Շուրջըդ պըսակ յոյսն ունէր,
Շուշանն անմեղ դոյն կ'առնէր,
Վարդը տիրով կը շիկնէր:

Երանի՛ որ քեզ տեսան
Ոսկեչուրջառ Հայրապետ,
Խորանին դէմ, յոյսին հետ,
Եւ քահանայ Վերնատան:

Երբ կ'առնէիր խոյանքներ
Տարսոնական բարբառով,
Հոգեգալուստ կը թըւէր,
Եւ բոցն այրող՝ հոգիդ էր:

Յանկարծ հրեշտակ թեւաբաց,
Կ'անցնէիր ծով ու ցամաք,
Եւ Բիւզանդիոնն ոսկեթագ
Կը խոնարհէր շուքիդ տակ:

Ո՛ր մոռացոնք, ո՛ր դարեր
Քեզ պատեցին տեւ քողով.
Արեւ մ'էիր՝ որուն քով
Մուկը չունէր սահմաններ:

Ու տակաւին կը հնչէ
Տարսոնի փողն արծաթէ.
Գիրքերու սուրբ խորանին՝
Հայութիւնն է կ'աղօթէ:

Եօթը գոյնով վայն կամար
Սըփոնցի մեր երկինքին.
Աղօթքներու մեղեդին
Հին օրերէն մեզ կու դար:

Ո՛վ մրմունջներ, հեծեծանք,
Խարազնաղբատ ճգնութիւն.
Դո՛ւ վանք էիր ոսկեսին,
Լուսաւորչի անըրջանք:

Այնքան ալիք չունէր ծովն
Ինչքան սրտիդ ծրփանքն էր.
Գեթսեմանի կը կոչուէր
Հոն՝ ուր լացիր օրերով:

Դուն կ'ըզձայիր գերդ մըշակ
Մաճին փարիլ Հայութեան,
Դաշտն ահօսել գիտութեան,
Չունենար սիրտն աւերակ:

Ոսկեշուրջառ Հայրապետ,
Քեզ տեսնողին երանի՛.
Սուրբ քղանցքիդ համբուրիկ,
Հրեշտակ կ'իջնէր Հայուն հետ:

Ոսկեշուրջառ Հայրապետ,
Մեր ժամերուն արբույթեան
Եղի՛ր սիրոյ Շարական,
Դու մի՛շտ եղիր մեզի հետ:

Վեմետիկ - Թքեփոքի, 13-14 փետր. 1987

ԵՐԿՆԱՅԻՆ ՆԿԱՐԻՉ

Օրհնեալ ես Դու, ո՛վ Տէր Աստուած,
Որ յայտնեցիր մեր Ռոպինին,
Դէմքըդ անճառ եւ սրբացած,
Եւ աէրդ ըրիր իր պարզ հոգին:

Բացիր առջեւն իր բնութիւնն
Համայնական եւ դեղեցիկ.
Շունչըդ տըւիր իբրեւ դարուն,
Աչքեր ըրիր կապոյտ ծաղիկ:

Նա ծնրադիր խաչիդ դիմաց,
Ճաճանչներու պէս խանդակաթ,
Իր արցունքով ոտքերդ լըւաց,
Արուեստին հետ սիրտն էր ելած:

Պարզեց թեւերն անկիւններուն,
Արեգակէն փետուր վնդրեց,
Եւ մագաղաթն՝ իր ծունկերուն
Լայն պարունակ մը նըկարեց:

Մէկ ծիածան հագար գոյնով
Բոլորեց նա շուրջը խաչին,
Եւ Տիրամօր թաց աչքերով
Վշտին տըւաւ դուլթ երկնային:

Մարդկային ձեռք թէ հըրաչք էր,
Որ գեղարուեստն աստուածանար,
Գոյնը գոյնէն ցոլքեր առնէր,
Եւ արեգակն ոսկի տեղար:

Տեղար մարգրիտ Աստուածամայրն
Իր հայեացքով ծովու նըման,
Շուրջն հրեշտակներ թռչողին,
Ոմանք կերոն, ոմանք շուշան:

Յանկարծ իջաւ լսումը մ'հաւքերու,
Արտոյտն եղաւ առաջին տառ
Եւ սիրամարդն, իբրեւ գարուն,
Մաղկաղարդեց ամէն մէկ բառ:

Կախեց հրեշտակ թեւը փոքրիկ
Բեթղեհէմի քարայրէն վար .
Պառկած էր հոն մատաղ Մանկիկ ,
Որ երգէ կ'ողջէր Կէ անոյշ մայր :

Քանի՜ հրեշտակ , քանի՜ սուրբեր
Արքայութեան փառքը քերին .
Մէկ դէմքը միւս գէմքէն նրբին ,
Չես դիտեր ո՞ր նայիս Սուրբին :

Երկինքն Կղաւ ոսկի կամար
Մէջն աղանձի եւ հեղութիւն .
Հոգին սուրբ էր , որ բոցաւառ
Սէր կը քաջխէր , իմաստութիւն :

Եւ նըկարիչը զարմացած
Հրաշագործակ իր արուեստին ,
Խաչին առջեւ ծունկի եկած
Սիրտը քայքայ արտասուագին . . . :

Օրհնեալ ես Դու , ո՛վ Տէր Աստուած ,
Որ յայտնեցիր մեր Ռոսլինին ,
Դէմքիդ պատկերը մարդացած ,
Եւ ըրիր քու սէրդ՝ իր հոգին :

Վեմետիկ , 11 Դեկտ. 1987

Ե.

ՀՌՈՄԿԼՍԹ

Արթընցէ՛ք դուք , չոյսի կարօտ զաւակներ ,
Արփին օծեց Հըռոմկլան .
Շաղոտ է վարդը պարիսպին առնթեր ,
Երկինքն է թաց ծիածան :

Կը մարմըրին մեր աչքերէն սիրելի
Աստղերն երկնի մի առ մի .
Եւ տիեզերքն հըրաշքներով կը լեցուի
Պատարագի խորհուրդին :

Սուրբի մը հեղ աչքերուն մէջ կը ծագին
Երանութեան տեսիլներ .
Պարիսպներուն , որոնք վանքի ձեւ ունին ,
Սի՛րտն է պահակ , ո՛չ զէնքեր :

Թէ դընէին շարիւղայէ քար քարի
Քիչ էր անոր պատիւին .
Հոն մէկը կայ , Աստուծոյ հետ կը խօսի ,
Թեւը տըւած երկինքին :

Աշտարակներ , բազուկի ձեւ պարաւոր ,
Ջահ կը թըլին մշտաւառ ,
Որոնց վերեւ սէրն աւելի լուսաւոր
Կը վանէ մէդ ու խաւար :

Իշխանական դահլիճներու մէջ չըքեղ
Սէրն էր բազմած թագուհի .
Կը դառնէին անբուժելի սրտին դեղ
Բալեկամ ու թշնամի :

Ինչո՞ւ Աստուած պահակ չըրաւ Սերովրէն ,
Հըրեղէն սուրը ձեռքին ,
Որ կորաւած հին դըրախտին փոխարէն
Եւան ժպտէր վերջստին :

Իր յիշատակն ալ բոյր ունի վաղեմի ,
Աղօթքին պէս սուրբերու .
Այնքան տըւաւ խաղաղութիւն աշխարհի ,
Որ Յոյսն առաւ ձեւ մարդու :

Ո՛չ բերդ էր նա եւ ոչ գլխակ արիւնտ ,
Ո՛չ բռնակալ՝ զէնքի տակ .
Աւետարանն էր լայնաբաց առաւօտ ,
Եւ Շարականը՝ պահակ :

ՍԿԵԻՌԱ

Որմեր շատ հին եւ խոնարհ ,
Ու դռներ քաց , սրտեր տաք ,
Սրբութիւն էր Տիրամայրն .
Արդ լըռած Կն , աւերա՛կ :

Բայց իր հոգին եւ անունն
Մազաղաթի մը հանդոյն,
Որքան հիննան՝ կը փոխուին,
Անջնջելի արքովիւն:

Քրիստոնեայ են որմերն այն,
Աղօթքը՝ սուրբ աշտանակ.
Մէր եւ հաւատք կը մընան,
Հին օրերու պատարագ:

Եւ ինքն իր մէջ առանձին
Հին հայեցող վանական,
Աչքերը միշտ դէպ՝ երկին,
Իր երգն է լոկ Շարական:

Նա կը տեսնէ տակաւին
Շուրջն Հայրաթիւն կենդանի,
Եւ որմերէն ալ անդին,
Հաւատացեալը ծունկի:

Իր տանիքին Կոյս մը կայ,
Կոյս մ'հայկական աչքերով.
Պատկեր մը չէ հնօրեայ,
Այլ մայրութիւն եւ գորով:

Նոճին է ջահ մոմի տեղ,
Խունկն է բուրբոս վարդերուն.
Եւ Լոյս զըլարթն է վանթեղ
Ամէն շարաթ իրիկուն:

Այգուն կ'իջնեն հոգիներ
Արեւագալն երգելու.
Այնտեղ չըկան դերբուկներ,
Այլ՝ անուններ սուրբերու:

Ամէն մէկ քար խորհուրդ է,
Ամէն կամար՝ երկնի ղուռ.
Այն ուր անխօս դերբուկ է,
Մարդերու սիրտն է թափուր:

Հոն ուր հայ միտքն ըստեղծեց
Անմահութիւնն արուեստի,
Ուր ուր Պիծակ երազեց
Ոսկի անունն արքայի:

Ո՛հ, չի կրնար ձեռքն անդուծ
Անմահութիւնը թաղել,
Եւ ո՛չ վրնայ սուրը բուծ
Կոստանդնի սիրտը խոցել:

Ու կը մընայ Ըսկեւտան,
Վանք ու մատեան պաշտելի.
Կը մընան վսաչ ու դամբան,
Պահակ՝ հողին հայրենի:

Վեմետիկ, 4 փետր. 1987

ԴՐԱՋԱՐԿ

Զեմ դիտեր, ո՞ր մացառներու շուքին տակ,
Ո՞ր հողին հետ հողացած,
Խաչակրնիք դամբաններ կան ամբարիակ,
Եւ արքաներ մոռցըւած:

Սրբավայր մ'էր, կապոյտին դէմ բաց խորան,
Շուրջը վարդեր ու թռչուն.
Ամէն խաչքար ունէր ճըրագ մը վըրան,
Վշտին տալու քաղցրութիւն:

Ուր պաղատանքը շարական կը կոչուէր,
Մոմերն՝ աղօթք լոյսերու.
Դէմքեր կային, սրբեմն իրենց սեւ ամպ էր,
Մարդիկ՝ ծընած սիրելու:

Հեւքը մէկուն միւսին համար աղօթք էր,
Զեռքը տալու շարունակ.
Պարանոցներ, բարութիւնն ուր վակաս էր,
Եւ հեղութիւնն էր պըսակ:

Խաչեալ որմերն համբոյրներով արբացած,
Սատանի դէմ բերդ էին.
Վանականներ սէղ լեռներու դէմ տրամաց
Հորիզոնին կ'իշխէին:

Ո՛վ Դըրազարկ, ես կ'աղօթեմ քեզ համար,
Քու անունիդ ծնրադիր.
Կարդացի ես մազադաթներ ոսկեհկար,
Խոկ և տենչանք թռչնադիր:

Մարդիկ կը քած, խուցերու մէջ մըթաստուեր,
Լալահառաչ երգեցին.
Կու դայ դանդիւնն հին երգերու խորհուրդին,
Նարեկացւոյ հաւատքին:

Պաղատեցան ծառերուն հետ ծաղկաբեր,
Շուշան տըւին իրարու.
Աղօթքի բոյրը կապոյտի կը փոխուէր,
Վանքի դուռն երբ կը բացուէր:

Բայց Դըրազարկը քանդեցին, քանդեցին
Բարբարոսներ հարաւի.
Կ'իջնեն երբեմն հըրեշտակներ միասին,
Շիրիմներուն հսկումի:

Թրեփոթի, 14 Յունիս. 1968

ՏԱՐՍՈՆ

Հին ես, անյայտ ժամանակէն աւելի,
Որմերդ արդէն մամուռ կապած, անբարբառ,
Եւ պատմութեանդ վրայէն անցած էր աշխարհ,
Մեկնած էր մարդն արեղակին հետ կեանքի:

Հազիւ կոխան քար մը գլուխն իր ցըցած
Վըկան էր զով օճախներուն երբեմնի.
Չունէիր դու խաչեր հիւսուած ճաճանչի,
Ո՛չ սաղմոսի արձագանդն էր մընացած:

Թշնամին ալ այսքան խորունկ չեն թաղեր,
Ո՛չ կը քանան վըրան քարուտ ճանապարհ.
Անցողդ բոսիկ, Տարսոնն է սո՛ւրբ մեզ համար:

Սուրբ է այդ հողն երկու անգամ. մի՛ կռիւր,
Եւ մի՛ թողներ այնտեղ ըստուերդ մեղաւոր,
Չաւակ ունի իմաստութեան համադոր:

ՄԱՐԱԹԱ

Գիւղակ մը կայ հին եւ աղքատ,
Չունի սլարտէզ, բուրաստան.
Հողը դեղին, անապատ,
Գիտէ՞ք ուր է Մարաթան:

Սոխակն ուրախ ո՞ւր թառի.
Հոն չի ծաղկիր ծիրանի,
Ո՛չ ըսպիտակ շուշանի
Դէմքն արեւէն կը ժպտի:

Բայց չա՛տ դարեր անցեր են...
Երբ հոն ծընաւ Այգեկցին,
Գիւղն էր անշուշտ բարեշէն,
Արուեստապէս՝ հայ հողին:

Եւ մանուկին մէջ դըրաւ
Իմաստութիւն Մարաթան,
Բիւր առակներ փունջ ըրաւ,
Սրտին դըրաւ պահապան:

Մեծցաւ մանուկը դաշտի
Իր հայրերուն արիւնով.
Երդը լըսեց սոխակի,
Այգիներու վարդին քով:

Իբրեւ աղօթք Յիսուսի,
Արշարոյսի դոյն առաւ.
Եւ հայկական մօր սրտի
Համբոյրներուն մէջ մեծցաւ:

Իր սրբինգով հովուական
Դիւթեց ամբողջ Մարտիան.
Այդքան անոյշ երգի ձայն
Հայե՛րը լսիկ կ'ունենան:

Իր սրտին մէջ հաւաքեց
Անմեղութիւնն ըսպիտակ.
Գիւղն այդ անշուք ամփոփեց
Իր անունի թեւին տակ:

Գիտցաւ օրերը կշռել
Իմաստունի մը նըման.
Արդարութիւնն համբուրել
Սիրտը բացած մարդկութեան:

(Շաբ. 2)

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ
(յետ մահու հրատարակութիւն)

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ - ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ LES LIVRES DU JOUR - RECENSIONS

CIVILISATIA ARMENILOR

di

MIHAI RADULESCU

Editură Sport - Turism; Bucureşti,
1983, pp. 264 + 29 ilustrazioni (in
appendice).

Il libro qui presentato ai lettori di «Bazmavep» è un volumetto di sintesi sulla cultura armena in generale.

Premettiamo che dal 1981 ad oggi sono apparsi in Romania tre libri divulgativi, ma ben curati, sulla letteratura, sull'arte e sulla cultura armena; ne ricordiamo i titoli:

- 1) AA. VV., **Antologie de poezie armeană**, clasică şi contemporană, Biblioteca pentru toţi (Editura Minerva), Bucureşti 1981, (presentazione e introduzione di Sergiu Selian)*.
- 2) Sylvia Agemian, **Manuscrise miniaturate în colecții din România**, Editura Meridiane, Bucureşti 1982.
- 3) Il libro che recensiamo.

Questa produzione è un segno dell'attenzione dei Romeni e degli Armeni di Romania per la nazione armena e vuole continuare una tradizione di ospitalità e simpatia risalente ad antichi tempi. Il libro

di Mihai Rădulescu è suddiviso in 17 capitoli, il primo ed il secondo sono a loro volta articolati in sottocapitoli. Il volume è preceduto da una breve prefazione e concluso da un capitoletto seguito dalla biografia. Il lavoro è dedicato a S. S. il Patriarca e Catholicos di Surb Ejmiacin, Vasken I (senza menzione dei titoli ecclesiastici del Presule) ed a Dirayr Mardichian, amico dell'autore.

Nella prefazione, Mihai Rădulescu si rende conto del difficile compito intrapreso e sottolinea: «Non si tratta di un lavoro esaustivo. Mancano capitoli abbastanza importanti, come quelli concernenti l'artigianato: la celebre arte dei tessitori di tappeti, degli argentieri, dei ceramisti, dei legatori di libri, questi necessiterebbero di un linguaggio troppo tecnico...

«Anche nei campi compresi nel libro, alcuni particolari rimangono in ombra. Ciò si deve, per prima cosa, allo spazio limitato di una esposizione di carattere generale, come quella trattata. Per dar un esempio sulle estensioni possibili di un lavoro ideale, citeremo a caso l'opera dell'accademico francese René Grousset, **Histoire de l'Arménie des origines à 1971** (Payot, 1973)...» (p. 8). La menzione di Grousset e la bibliografia, non selettiva ma relativamente ben curata (comprende 86 titoli e, tra gli autori, fanno spicco P. Alişan, N. Iorga, C. Diehl, J. Strzykowski), sono indice di un

*) Contributi di D. M. ION, C. ILCA, H. GRAMESCU.